ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական

խորհրդի 2018թ. դեկտեմբերի 28-ի նիստի

Նեչկա էին գիտական խորհրդի 68 անդամներից 60-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Միջազգային համագործակցության ներկա վիճակը և խնդիրները:

Զեկ. Գ.Համբարձումյան

2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ ՀԱԱՀ արտաքին կապերի դեպարտամենտի պետ Գարեգին Համբարձումյանի հաղորդումը «Միջազգային համագործակցության ներկա վիճակը և խնդիրները» հարցի մասին

/զեկուցումը կցվում է/:

Զեկուցողը տեղեկացրեց, որ միջազգային համագործակցության ոլորտում ՀԱԱՀ-ն հետևողականորեն ընդլայնում է իր կապերն ու ձևաչափը: Նշվեց, որ ՀԱԱՀ ներկայումս ունի շուրջ 105 կնքված համագործակցության համաձայնագրեր և հուշագրեր, որոնցից 13-ը կնքվել են 2018 թվականին: Համագործակցությունը հատկապես սերտ է Եվրոպական տարբեր բուհերի հետ: Ընդ որում՝ Էրազմուս+ ծրագրերի քանակով 2017 և 2018թթ.-ին ՀԱԱՀ-ն երկրորդն է ՀՀ բուհերի շարքում: Այդ ծրագրերի շրջանակներում 29 ուսանողներ և 38 դասախոսներ վերապատրաստվել են Եվրոպական տարբեր բուհերում: Տարբեր երկրներ 2018թ.-ին, ընդհանուր արմամբ, գործուղվել են 56 ուսանողներ և 83 դասախոսներ:

Արտահայտվեցին՝ Ա.Հովհաննիսյանը, Ա.Ոսկանյանը, Ռ.Շահինյանը, Գ.Մարմարյանը:

Ռեկտոր Վ.Ուռուտյանը դրական գնահատեց զեկուցողի ինքնաքննադատական մոտեցումը և շնորհակալություն հայտնեց զեկուցման համար:

Ա.Հովհաննիսյանը հարց բարձրացրեց միջին մասնագիտական ոլորտում միջազգային համագործակցության, բարեփոխումների և վերապատրաստումների մասին: Սակայն շեշտադրեց, որ հարցը ոչ թե

շարժունության ծրագրերի մասին է, այլ նոր մասնագիտությունների ներդրման: Այս առումով ռեկտոր Վ.Ուռուտյանը նշեց, որ զեկուցման մեջ դրամաշնորհային գործունեությունը ներկայացված չէ: Ցանկալի է, որ նոր նախաձեռնվող ծրագրերը վերաբերվեն ոչ միայն շարժունության, այլ նաև ներդրման: Նշվեց, որ դրամաշնորհային զուտ ենթակառուցվածքային ծրագրերի առումով աշխատանքներ արված չեն:

Եղավ առաջարկություն ուսանողների շարժունության ընթացքում հավաքված կրեդիտները սահմանված ձևով գրանցվեն դիպլոմի հավելվածում:

Անդրադարնալով օտար լեզուներին, նշվեց դասավանդման արդյունավետության բարձրացման և աշխատակիցների շրջանում օտար լեզուների իմացության մասին:

Որոշեցին՝ Լսելով և քննարկելով «Միջազգային համագործակցության ներկա վիճակը և խնդիրները» հարցը և բուհում միջազգայնացման ուղղությամբ առկա որոշ բացթողումները, գիտական խորհուրդը

ո ր ո շ ու մ է՝

/որոշումը կցվում է/:

Լսեցին՝ ՀԱԱՀ արտաքին կապերի դեպարտամենտի պետ Գ.Համբարձումյանը ներկայացրեց գիտական խորհրդի հաստատմանը «Միջազգային ծրագրերի մրցույթների կազմակերպման և անցկացման ընթացակարգը»:

Որոշեցին՝Հաստատել ներկայացված «Միջազգային ծրագրերի մրցույթների կազմակերպման և անցկացման ընթացակարգը»:

Լսեցին՝ Ֆինանսների և վարկի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Ռոբերտ Սոսի Քոչարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

Որոշեցին՝Ֆինանսների և վարկի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Ռոբերտ Սոսի Քոչարյանի Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ «Դրամաշրջանառության կարգավորման հիմնախնդիրները ՀՀ տնտեսական աճի ապահովման գործընթացում» վերնագրով

թեկնածուական ատենախոսության թեմայի գիտական ղեկավար նշանակել տնտեսագիտության դոկտոր Արմեն Գեորգիի Սաֆարյանին:

Լսեցին՝ Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի հեռակա անվճար ուսուցման համակարգի, զինծառայությունից առանց տարկետման իրավունքի ուսուցման 1-ին կուրսի ասպիրանտ Հայկ Հակոբի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Որոշեցին՝ Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի հեռակա, անվճար ուսուցման ասպիրանտ Հայկ Հակոբի Պետրոսյանի Ե.18.01 «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ, «Արցախում աճող տարբեր կաղնու բնափայտերով կոնյակի սպիրտի պահորակումը» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի գիտական ղեկավար նշանակել տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ի.Սահրադյանին:

Լսեցին՝ Արգիշտի Գուրգենի Եղիազարյանի թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

Որոշեցին՝ Արգիշտի Գուրգենի Եղիազարյանի Զ.01.01 «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ, «Արարատյան դաշտի հողերի աղակալման մոնիտորինգ» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Գիտխորհրդի նախագահ Վ.Ուռուտյան

Գիտքարտուղար Դ.Ս.Բալասանյան